



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 22 849 « 04 » 02 2019 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2019թ. հաստիքացուցակը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերում և աշխատանքի ընդունելու մասին ԵՊՀ ռեկտորի անհատական իրավական ակտերում (հրամաններում) կատարել փոփոխություն՝ «Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոն» բառերը փոխարինելով «Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոն» բառերով:

2. Աշխատողների հետ կնքված աշխատանքային պայմանագրերի և աշխատանքի ընդունման մասին ԵՊՀ ռեկտորի անհատական իրավական ակտերի մյուս դրույթները թողնել անփոփոխ:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչությանը, ուսումնամեթոդական վարչությանը, հաշվապահությանը և աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՐ

Ա. Ս. ՍԻՄՈՆՅԱՆ